Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից գորգերի և ուղեգորգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

29 մարտի 2022թ.
ժամը՝ 12.45

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մաճկալյան, Վ.Մամբրեյան, Ա.Լալայան, Ա.Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	ուղեգորգեր	24860800
2	գորգեր	11088000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 25.03.2022թ.-ին ժամը 12:45-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 28.03.2022 թ.-ին ժամը 12:45-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Արմկարպետ» ՍՊԸ	ք.Երևան, Շենգավիթ, Մադոյան փ 9/1	+(37493) 93-89-93	armcarpet@mail.ru
2	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	Գայի 31	+(37455) 75-54-55	-

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Արմկարպետ» ՍՊԸ	24860800	0%	24860800	24860800	0%	24860800	
	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	100000000	0%	100000000	100000000	0%	100000000	Մերժված
2	«Արմկարպետ» ՍՊԸ	11088000	0%	11088000	11088000	0%	11088000	
	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	100000000	0%	100000000	100000000	0%	100000000	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 28.03.2022թ. և 1-ին և 2-րդ չափաբաժնով «Արմկարպետ» ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով «Արմկարպետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց, որ հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ /Հավելված 1/ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է Վրեժ Ավագյանի կողմից, սակայն բացակայում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը:
- Բացակայում է Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ /Հավելված 1.2 կամ Հավելված 1.3/
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Արտադրող» սյունակը 1-ին և 2-րդ չափաբաժիններում ենթակա է շտկման, անհրաժեշտ է նշել ապրանքն արտադրող կազմակերպության կազմակերպական-իրավական տեսակը: Երաշխիքային ժամկետը 1-ին և 2-րդ չափաբաժիններում ենթակա է հստակեցման: 1-ին և 2-րդ չափաբաժիններում թերի է «..... գործարանային արտադրության (2022թ.) և պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի առկայությամբ:» նախադասությունը, մասնավորապես բացակայում է «..... և պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի առկայությամբ:» նշումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/15 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 29.03.2022թ-ին նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Արմկարպետ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 31.03.2022թ. ժամը 12:45-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 31.03.2022թ. ժամը 12:45-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Արմկարպետ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Արմկարպետ» ՍՊԸ-ի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժնով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

31.03.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Արմկարպետ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով՝ հայտարարել որպես ընտրված մասնակից:

ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի ներկայացրած գինը աճուրդն ամփոփվելու պահին 1-ին և 2-րդ չափաբաժնով գերազանցել է Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը, ուստի ներկայացված հայտը 1-ին և 2-րդ չափաբաժնով Համակարգի կողմից համարվել է մերժված:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Վարդան Թորոսյան
անդամներ՝	_____	Միհրան Մաճկալյան
	_____	Վաչե Մամբրեյան
	_____	Անժելա Լալայան
	_____	Ավետիք Խուդինյան
Քարտուղար՝	_____	Հերմինե Սաղաթելյան